DOI 10.57192/18291864-2025.1-263

Գարրի Գ. Ասրյան
Ռազմ. գիտ. թեկնածու,
asryangarri2@gmail.com
orcid: 0009–0004–0950–1896

Արմեն Ռ. Բաղալյան
Պատմ. գիտ. թեկնածու
armbad@mail.ru
orcid: 0009–0007–0976–9595

ԱՐՑԱԽՈՒՄ ՌԱԶՄԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ*

Հարությունյան Մ. Ա. Ռազմական շինարարությունը Արցախում 1991–2006 թթ., Եր, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2024, 416 + 6 նկ. ներդիր:

Ամփոփում

Սույն գրախոսությունը վերաբերում է Մհեր Հարությունյանի «Ռազմական շինարարությունը Արցախում, 1991–2006 թթ.» մենագրությանը, որը համակարգային վերլուծության է ենթարկում Արցախի Հանրապետության՝ ռազմական և ինստիտուցիոնալ կայացման գործընթացը: Հեղինակը ներկայացնում է Պաշտպանության բանակի ձևավորման, կայացման և ռազմավարական վերափոխման փուլերը ադրբեջանական ռազմական սպառնալիքի պայմաններում:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 30.03.2025:

Մենագրության հիմնական վերլուծական ուղղություններն են՝ զինված ուժերի և կառավարման ինստիտուցիաների ձևավորումը (1992–1994 թթ.), սահմանափակ ռեսուրսների պայմաններում ռազմական ենթակառուցվածքների և նյութատեխնիկական բազայի զարգացումը, սպայական կազմի պատրաստումը և մասնագիտական վերապատրաստումը՝ տեղական և արտասահմանյան կրթական համակարգերում, հրադադարին հաջորդած շրջանում դիրքային պաշտպանության և տարածքային ամրաշինության կազմակերպումը:

Գրախոսության մեջ ընդգծվում է այն հանգամանքը, որ մենագրությունը հիմնված է բացառիկ սկզբնաղբյուրների վրա (արխիվային փաստաթղթեր, պաշտոնական հրատարակություններ, հիշողություններ), որոնցից շատերը 2023 թ. Արցախի բնակչության բռնի տեղահանությունից հետո եզակի պատմագիտական արժեք ունեն:

Հատուկ ուշադրություն է դարձվում հետազոտության հայեցակարգային նշանակությանը՝ ռազմական շինարարությունը դիտարկելով որպես պետականակերտման հիմնական գործոն՝ Արցախի քաղաքական կարգավիճակի անորոշության և գոյաբանական սպառնալիքների առկայության պայմաններում: Մենագրությունն աչքի է ընկնում ոչ միայն փաստերի առատությամբ, այլև հիմնավորված տեսական վերլուծություններով, որոնք միավորում են ազգային անվտանգության, հակամարտագիտության և ինստիտուցիոնալ կայունության ոլորտները:

Գրախոսությունը նաև ընդգծում է աշխատության կիրառական արժեքը՝ այն դիտարկելով որպես հիմք՝ պաշտպանական քաղաքականության մշակման, ինչպես նաև ռազմական կրթության և ռազմավարական հետազոտությունների իրականացման համար:

Գրախոսվող աշխատությունը դիտվում է որպես արժեքավոր ներդրում հետխորհրդային չճանաչված պետությունների զինված ուժերի ձևավորման և ռազմական ինստիտուցիոնալացման ուսումնասիրության ոլորտում:

Բանալի բառեր – Արցախ, ռազմական շինարարություն, Պաշտպանության բանակ, պետականակերտում, ազգային անվտանգություն, ինստիտուցիոնալ զարգացում, հետխորհրդային հակամարտություն, չճանաչված պետություն, դիրքային պաշտպանություն, սպայական պատրաստում:

Garri G. Asryan
Armen R. Badalyan

HISTORICAL AND STRATEGIC FOUNDATIONS OF MILITARY CONSTRUCTION IN ARTSAKH

Arutyunyan M. A., Military Construction in Artsakh, 1991–2006, Yerevan, Kachar Scientific Center Publishing House, 2024,
416 pages + 6-page insert.

Abstract

This review examines Mher Harutyunyan's monograph «Military Construction in Artsakh, 1991–2006», which provides a foundational historical and strategic analysis of the military-institutional development of the Republic of Artsakh during its formative post-Soviet period. The monograph offers a multidimensional exploration of the establishment, consolidation, and doctrinal evolution of the Defence Army of Artsakh (DAA), framed within the geopolitical and security challenges posed by Azerbaijani aggression.

Key thematic directions addressed in the monograph include: the institutionalization of armed forces and defence governance (1992–1994), the development of military infrastructure and logistics under resource-limited conditions, the training and professionalization of officer corps through both domestic and international frameworks, and the implementation of territorial defence and fortification strategies in the post-ceasefire period (1994–2006).

The review highlights the author's effective use of primary sources, including classified archival materials, official publications, military press, and personal testimonies, many of which have gained unique historiographic value following the forced displacement of Artsakh's population in 2023.

Particular attention is paid to the book's conceptual contributions to the understanding of military construction as a key component of state-building under conditions of political non-recognition and existential threat. The monograph is not merely a descriptive chronology but a systematic and theoretically informed analysis that interfaces military history with national security studies, conflict theory, and institutional resilience.

The review underscores the work's relevance for academic disciplines such as military history, political science, and strategic studies. It also notes its potential utility for policy planners and defence professionals concerned with the design of

Հայ հասարակական գիտություններ, ԺԷ (ԺԳ) տարի, թիվ 1 (89), հունվար-մարտ, 2025

adaptive and context-specific national security strategies, especially in contested regions.

In light of its methodological rigour, originality, and applied analytical insights, the monograph represents a significant contribution to the evolving field of post-Soviet military transformations and de facto state studies.

Keywords - Artsakh, military construction, Defence Army, state-building, national security, institutional development, post-Soviet conflict, unrecognised statehood, territorial defence, officer training.

Гарри Г. Асрян
Армен Р. Бадалян

ИСТОРИЧЕСКИЕ И СТРАТЕГИЧЕСКИЕ ОСНОВЫ ВОЕННОГО СТРОИТЕЛЬСТВА В АРЦАХЕ

Арутюнян М. А. *Военное* строительство в Арцахе в 1991–2006 гг.*,*
Ереван, Издательство научного центра «Качар», 2024,
416 стр. + 6 стр. вкладыш.

Резюме

Настоящая рецензия посвящена монографии Мгера Арутюняна «Военное строительство в Арцахе, 1991–2006 гг.», в которой проводится системный анализ процессов военного и институционального становления Республики Арцах в постсоветский период. Автор последовательно раскрывает этапы формирования, консолидации и стратегической трансформации Армии обороны Арцаха в условиях военной угрозы со стороны Азербайджана.

Ключевые направления анализа включают: институционализацию вооружённых сил и органов управления (1992–1994 гг.), развитие военной инфраструктуры и материально-технической базы в условиях ограниченных ресурсов, подготовку офицерского корпуса как внутри страны, так и в зарубежных военных вузах, реализацию стратегии позиционной обороны и укрепления территорий в постперемирийный период (1994–2006 гг.).

В рецензии подчёркивается, что монография основана на редких первоисточниках (архивные документы, официальные публикации, воспоминания), многие из которых приобрели уникальное историко-документальное значение после насильственного выселения населения Арцаха в 2023 году.

Особое внимание уделено концептуальной ценности работы: военное строительство рассматривается как ключевой компонент государственности в условиях политической непризнанности и экзистенциальной угрозы. Исследование сочетает в себе фактическую насыщенность и теоретически обоснованный анализ, охватывающий области национальной безопасности, теории конфликтов и институциональной устойчивости.

Рецензия также акцентирует прикладную значимость исследования — как с точки зрения стратегического планирования в сфере обороны, так и для преподавания в образовательных программах по военной истории и национальной безопасности.

Работа рассматривается как весомый вклад в изучение трансформаций вооружённых сил в постсоветском пространстве и процессов институционализации в условиях непризнанного государственности.

Ключевые слова: Арцах, военное строительство, Армия обороны, государственность, национальная безопасность, институциональное развитие, постсоветский конфликт, непризнанное государство, территориальная оборона, подготовка офицеров.

Մուտք

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ և պահեստազորի մայոր Մհեր Հարությունյանի «Ռազմական շինարարությունը Արցախում 1991–2006 թթ.» մենագրությունում որպես ուսումնասիրության հիմնական ժամանակաշրջան առանձնացված են 1991–2006 թվականները, որոնք, ըստ հեղինակի, հանդիսանում են Արցախի Հանրապետության ռազմական շինարարության հիմքն ու ինստիտուցիոնալ ձեւավորման փուլը: Նրա համոզմամբ՝ այս տարիներն ազդարարել են ոչ միայն զինված ուժերի ինստիտուցիոնալ ձեւավորման սկիզբը, այլև անվտանգության համակարգի կայացման մի նոր, ռազմավարական ժամանակաշրջան:

Հեղինակը դիտարկում է, որ Արցախյան շարժման վերազարթոնքը և հատկապես 1991–1994 թվականներին մեզ պարտադրված պատերազմը պայմանավորեցին Արցախի ինքնապաշտպանության ուժերի (ԱԻՊՈՒ) ստեղծումը՝ որպես նորաստեղծ հանրապետությունը ադրբեջանական ագրեսիայից պաշտպանելու գլխավոր միջոց:

Մենագրության մեկնակետում ռազմական շինարարությունը ներկայացվում է որպես նպատակաուղղված և համակարգված գործընթաց՝ ուղղված այնպիսի զինված ուժերի կերտմանը, որոնք օժտված կլինեն ժամանակակից սպառազինությամբ, բարձր պատրաստվածությամբ և բարոյահոգեբանական ներուժով: Ըստ պատմաբան Մ. Հարությունյանի՝ սա դարձել է անհրաժեշտություն ոչ միայն ընթացիկ ռազմական սպառնալիքներին դիմագրավելու, այլև հայկական պետականության կայունությունն ու գոյությունն ապահովելու համար:

1. Ռազմական շինարարության ռազմավարական պատկերը մենագրության շրջանակում

Հեղինակի աշխատության հիմնական շեշտադրումը հիմնված է այն համոզման վրա, որ ռազմական շինարարությունը Արցախի Հանրապետության պետականության կայացման գործընթացում ոչ միայն անվտանգության ապահովման գործիք էր, այլև ինստիտուցիոնալ կայունության առանցքային բաղադրիչ: Մենագրությունում ռազմական համակարգի ձևավորումը դիտարկվում է որպես կառավարման համակարգերի, ենթակառուցվածքային կարողությունների և մարդկային ռեսուրսի զարգացման փոխկապակցված ընթացք, որը ոչ միայն արձագանք էր պատերազմի մարտահրավերներին, այլև կանխատեսելի սպառնալիքներին պատրաստ լինելու ռազմավարական ծրագիր: Հեղինակը վերլուծում է, թե պատերազմական անհրաժեշտությունը ինչպես վերածվեց համակարգային պետական քաղաքականության՝ ուղղված ոչ միայն գոյատևման, այլ նաև պաշտպանական ինքնաբավության և կայունության ձևավորմանը: Շեշտվում է նաև այն հանգամանքը, որ ռազմական ինստիտուտների ձևավորման գործընթացը իրականություն դարձավ ոչ թե ստանդարտ մոդելներով, այլ կոնկրետ տեղական իրողություններին համապատասխանեցված մոտեցումներով՝ ընդգրկելով կառավարման, կադրային, նյութատեխնիկական և տարածքային-պաշտպանական բաղադրիչները: Այս ամենը ներկայացված է ոչ միայն վավերագրական ու ժամանակագրական հենքով, այլ նաև վերլուծական խորությամբ, ինչը մենագրությանը հաղորդում է գիտական կշիռ՝ միևնույն ժամանակ բաց պահելով դաշտը հետագա թեմատիկ ուսումնասիրությունների համար:

2. Ռազմական շինարարությունը՝ որպես անվտանգային և քաղաքական դիմադրողականության հենք

Հեղինակը մենագրության շրջանակներում վերհանում է ռազմական շինարարության նշանակությունը ոչ միայն որպես պաշտպանության համակարգի տեխնիկական կամ կազմակերպական տարր, այլ որպես անվտանգային և քաղաքական դիմակայության ինստիտուցիոնալ ռեսուրս: Նշելով, որ ռազմական ինստիտուտների զարգացումը յուրաքանչյուր պետության անվտանգության ապահովման կարևոր նախապայմանն է, հեղինակը արձանագրում է, որ նման գործընթացները հատուկ կշիռ են ստանում այն միջավայրում, որտեղ տևական հակամարտությունը պայմանավորված է ագրեսիվ արտաքին քաղաքականությամբ: Արցախյան իրողությունների համատեքստում բանակաշինության առաջընթացը դիտարկվում է ոչ միայն պաշտպանական նպատակահարմարության դիրքերից, այլև որպես պետական ինքնիշխանության ամրապնդման և ռազմական հավասարակշռության պահպանման գործոն՝ պայմանավորված հակառակորդի նախահարձակ ռազմավարությամբ և տարածքային շրջափակման ճնշումներով:

Արցախի 1991–2006 թթ. բանակաշինության մասին վերլուծությունը ներկայացվում է որպես փորձառական նյութ՝ հիմնված կոնկրետ պատմական իրադարձությունների, կառուցվածքային փոփոխությունների և ռազմավարական նախաձեռնությունների վրա, որոնց ճշգրտված ներկայացումն ունի և՛ պատմագիտական, և՛ կիրառական նշանակություն: Ըստ հեղինակի՝ ռազմական շինարարության պատմության վերաիմաստավորումը կարող է հիմք ծառայել նոր հետազոտությունների, ինչպես նաև՝ այնպիսի գիտական և հանրային գործընթացների խթանման համար, որոնք միտված են Արցախի Հանրապետության օրինական հիմքերի ու պատմական վավերության արդարացված ներկայացմանը:

Աշխատության մեջ առանձնացվում է նաև ռազմական ինստիտուցիոնալացման(17, 720–721)՝ ազգային անվտանգության հայեցակարգային հիմքերին նպաստելու ներուժը: Հեղինակը փաստում է, որ ռազմական շինարարության վերլուծությունը կարող է օգտակար լինել ազգային անվտանգության ռազմավարության մշակման գործընթացում՝ որպես գործնական և տեսական հենք՝ համազգային առաջնահերթությունների գնահատման, սպառնալիքների համակարգման և պաշտպանական արձագանքների պլանավորման համար: Այս տե-

սանկյունից մենագրությունը դուրս է գալիս զուտ պատմական պատումների շրջանակից՝ մտնելով քաղաքական ռազմավարության մշակման ուղենիշային դաշտ:

3. Վերլուծական շրջանակը և դրա փաստական հիմնավորումը

Արցախում ռազմական շինարարության վերանայման հիմքում հեղինակը դրել է խնդիրների այն շրջանակը, որը ներառում է թե՛ հայեցակարգային գնահատում, թե՛ գործնական նպատակադրում: Նա աշխատության մեջ փորձել է գիտական հիմնավորմամբ ներկայացնել Արցախի Հանրապետության զինված ուժերի՝ որպես տարածաշրջանային կայունության ապահովման սուբյեկտի օրինաչափ և անհրաժեշտ մասնակցությունը. մի երևույթ, որը, ըստ հեղինակի, տեղադրվում է միջազգային իրավունքի արդի նորմատիվ դաշտում(20,253–260): Միևնույն ժամանակ մենագրության հիմքում ընկած է այն գաղափարը, որ հայկական երկրորդ պետական միավորի գոյությունը պատասխան էր ոչ միայն գոյաբանական սպառնալիքներին, այլ նաև Ադրբեջանի ռազմատենչ վարքագծի հավասարակշռման կարևոր ռազմաքաղաքական գործիք:

Հեղինակի վերլուծությունն ուղղված է նաև այն նպատակին, որ ռազմական շինարարության իրական փորձն ու դասերը կարող են ծառայել հակամարտության կարգավորման գործընթացում հայկական կողմի դիրքորոշումն ամրապնդելուն՝ հիմնվելով արցախցիների ինքնորոշման իրավունքի վրա: Այս տեսանկյունից ուսումնասիրվում է զինված պայքարի տեսական մշակման հնարավորությունը՝ հաշվի առնելով ռազմական գործողությունների իրական հնարավոր պարամետրերը, ուժերի հավանական կազմերը և թատերաբեմի առանձնահատկությունները: Այս մոտեցումը զերծ է մնում պատմամշակութային ռոմանտիզմից և կառուցված է ռազմագիտական իրատեսության հիմքի վրա:

Աշխատությունը ժամանակագրական առումով կենտրոնանում է 1991–2006 թվականների վրա՝ ԼՂՀ հռչակումից մինչև պաշտպանական բարեփոխումների համակարգման փուլը և Սահմանադրության ընդունումը: Սակայն ուսումնասիրված հիմնահարցերի ամբողջական պատկերն ապահովելու նպատակով հեղինակը ներգրավել է նաև դրան նախորդող և հաջորդող ժամանակաշրջաններից դեպքեր, երբ դրանք

անհրաժեշտ են եղել պատճառահետևանքային կապերի վերակառուցման համար:

Աղբյուրագիտական տեսանկյունից մենագրությունը հիմնվում է բազմաբնույթ ու բազմահարկ տեղեկատվական շերտերի վրա: Օգտագործվել են պետական և ռազմական արխիվային ֆոնդեր՝ ներառյալ ՀՀ և ԼՂՀ պաշտպանության նախարարությունների, Արցախի կառավարման մարմինների, առանձին զորամասերի փաստաթղթերը, ինչպես նաև «Կաճառ» գիտական կենտրոնի հենքային նյութերը: Լուրջ տեղ է տրված նաև ժամանակի պարբերական մամուլի անդրադարձներին, վերլուծական և ռազմագիտական գրականությանը, ինչպես նաև ռազմական գործիչների հուշագրություններին, միջազգային հեղինակավոր կազմակերպությունների և վերլուծական կենտրոնների վիճակագրական տեղեկություններին(18,19,21,22,23,24,25,26): Ընդ որում, հեղինակի օգտագործած բազմաթիվ նյութեր՝ հատկապես արխիվային բնույթի, 2023 թ. սեպտեմբերին Արցախի բնակչության բռնի տեղահանությունից հետո փաստացի դարձել են պատմագիտության համար անփոխարինելի սկզբնաղբյուրներ՝ իրենց յուրահատուկ արժեքով և ներկայումս դժվար հասանելիությամբ:

Ջգալի է Մ. Հարությունյանի ներդրումը Արցախում ռազմական շինարարության պատմության հիմնահարցերը ուսումնասիրելու և գիտականորեն ներկայացրելու գործում, ինչի մասին են վկայում նրա մենագրությունները(2,6,9,10,13) ու գիտական հոդվածները(3, 78–88, 4, 73–86, 11, 111–120, 12,25–46), միջազգային գիտաժողովների նյութերի ժողովածուները(5,205–217,7,103–109,8,30–31) և թեմատիկ հանրագիտարանը(15, 9–28, 549–555 ևն)[1]: Պատմաբանի վաստակը ըստ արժանվույն գնահատել են մասնագետները(16, 507–512): Աշխատություններից մեկն արժանացել է գիտության բնագավառում ԼՂՀ կառավարության Եղիշեի անվան ամենամյա մրցանակի(1, 10):

[1] Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988–1994, Հայկական հանրագիտարանի հրատ. գիտախմբագր. հանձնաժողով՝ Հ. Մ. Այվազյան (գլխ. խմբագիր-տնօրեն), Ջ. Հ. Բալայան (նախագահ), Հ. Մ. Խաչատրյան (գլխ. խմբագրի և նախագահի տեղակալ, հատորի պատասխ.), Մ. Ա. Հարությունյան և ուրիշներ, Հանրագիտարան 1 հատորով, Եր., Հայկական Հանրագիտարանի հրատ., 2004, 9–28, 549–555 և այլն:

4. Պատմական փորձից՝ անվտանգային ռազմավարություն

Ռազմական շինարարության պատմական ընթացքը հեղինակը մենագրության մեջ ներկայացնում է ոչ միայն որպես ուսումնասիրության առարկա, այլև որպես հենակետ՝ ազգային անվտանգության ռազմավարության տեսական ձևակերպման և գործնական կիրառման համար: Նրա դիրքորոշմամբ, ռազմական ինստիտուտների ձևավորումը Արցախում 1991–2006 թվականներին ստեղծել է մի փորձառական համակարգ, որի ամբողջական վերլուծությունը հնարավորություն է տալիս վերաիմաստավորելու պետության անվտանգային հայեցակարգերը: Ըստ այդմ, ռազմական շինարարության պատմության ուսումնասիրությունը դիտարկվում է որպես աղբյուր՝ ազգային անվտանգության հիմնադրույթների մշակման և դրանց իրագործման մեխանիզմների համակարգման համար:

Հեղինակը հիմնավորում է, որ ռազմավարական մտածողության զարգացումն անհնար է առանց այնպիսի պատմական գործընթացների քննության, որոնք համադրելի են թե՛ ներպետական կառավարման կառուցվածքների, թե՛ տարածաշրջանային սպառնալիքների համատեքստում կայացված որոշումների տրամաբանության հետ: Արցախի բանակաշինության կոնկրետ փորձը, ըստ նրա, ընդգրկում է անվտանգության սպառնալիքների գնահատման, արագ արձագանքման, պաշտպանական հզորությունների կուտակման և ինքնաբավության կառուցման բոլոր հիմնական բաղադրիչները: Այս առումով մենագրությունն առաջարկում է մի եզակի դեպք՝ պետության ինքնապաշտպանության կազմակերպման արդյունավետ փորձ՝ քաղաքական չճանաչվածության պայմաններում:

Աշխատության գործնական նշանակությունն արտահայտվում է նաև այն դրույթներում, որոնք վերաբերելի են պաշտպանական ռազմավարությունների մշակմանը, սպայական կազմի վերապատրաստման համակարգին և ռազմական կրթության բովանդակությանը: Հեղինակը մատնանշում է, որ իր ուսումնասիրության արդյունքները կարող են ընդգրկվել նաև բարձրագույն ռազմական ուսումնական հաստատությունների ծրագրերում՝ հատկապես այն դեպքերում, երբ ուսումնասիրվում են տեղայնացված անվտանգային համակարգեր և հակամարտությունների բարդ տիպաբանություն:

Այսպիսով, մենագրությունը դուրս է գալիս պատմագիտական ուսումնասիրության սահմաններից՝ դառնալով ռազմավարական պլա-

նավորման գործիք՝ հիմնված առկա իրողությունների համապարփակ վերլուծության վրա: Այն միևնույն ժամանակ հղում է անցյալին, գնահատում ներկան և ձևավորում ապագայի հնարավորություններ՝ ազգային անվտանգության ապահովման տեսական և գործնական դաշտերում:

5. Մենագրության կառուցվածքային ռիթմն ու բովանդակային հստակեցումը

Մենագրությունը ձևավորված է նպատակահարմար կերպով՝ համապատասխանեցված թե՛ ուսումնասիրության բովանդակային տրամաբանությանը, թե՛ այն հիմնահարցերի հաջորդական վերլուծությանը, որոնք դասավորված են թեմատիկ և ժամանակագրական սկզբնակետից մինչև ռազմավարական ամփոփում: Աշխատությունը կազմված է ներածությունից, երեք գլխավոր բաժիններից, վերջաբանից և հավելումներից, որոնք ապահովում են նյութի լիարժեք ըմբռնումն ու փաստաթղթային հենքի տեսանելիությունը: Տեքստին կից ներկայացված են նաև ռուսերեն և անգլերեն ամփոփումներ, հապավումների ցանկ, անձնանունների և տեղանունների ցուցակ, ինչպես նաև վավերագրական բնույթի փաստաթղթեր և ներդիրային նկարներ: Ընդհանուր ծավալը՝ 416 էջ, արտահայտում է ոչ միայն նյութի հարստությունը, այլև դրա համակողմանի մշակվածության աստիճանը:

Առաջին գլուխը կենտրոնացած է Արցախի ինքնապաշտպանության համակարգի ձևավորման և զինված ուժերի կայացման նախնական փուլերի վրա՝ ընդգրկելով 1991–1994 թթ. ռազմական կազմակերպման մարտահրավերները, կառավարման կառույցների ձևավորումը, սպառազինության շտապ հարցերը և մարտական փորձի հիման վրա կառուցված կազմակերպչական մոդելները: Մասնավորապես՝ նկարագրվում են այն մեխանիզմները, որոնց միջոցով ԱԻՊՈՒ-ն վերափոխվեց Պաշտպանության բանակի՝ ԱՊԲ-ի, իսկ պատերազմի ընթացքում մշակված արձագանքման ձևաչափերը հիմք դարձան հետագա ինստիտուցիոնալ կայացման համար:

Երկրորդ գլուխը վեր է հանում այն գործընթացները, որոնք ծավալվել են հրադադարի հաստատումից հետո՝ 1994–1999 թթ: Հեղինակը վերլուծում է բանակաշինության բարեփոխումների ընթացքը, հրամկազմի ուսումնական պատրաստվածության համակարգի ամրապնդումը, օրենսդրական ու կազմակերպչական ճկունության ներդ-

րումը, ինչպես նաև պաշտպանության ոլորտում ձևավորվող ինստիտուտների ինքնաբավության ձգտումը:

Երրորդ գլխում ներկայացված է ռազմական շինարարության որակական վերափոխումը՝ 2000–2006 թվականներին, երբ ԱՊԲ-ն ստանձնում է ոչ միայն ռազմական, այլև պաշտպանական ռազմավարության լիարժեք պատասխանատվություն: Այստեղ առաջնային տեղ են գրավում տեխնիկական արդիականացման ծրագրերը, զորահավաքային ներուժի բարելավումը, սպայական կազմի կայացումը և տարածաշրջանային անվտանգությանը համարժեք կառավարման կառուցվածքների ձևավորումը:

Վերջաբանում ամփոփվում են ողջ ուսումնասիրության առանցքային եզրահանգումները՝ տրամադրելով ոչ միայն տեսական ամփոփում, այլև գործնական առաջարկություններ, որոնց կիրառական նշանակությունը վերաբերում է ինչպես ռազմաքաղաքական ոլորտին, այնպես էլ ակադեմիական ու կրթական համակարգերին: Այս կառուցվածքը մենագրությանը հաղորդում է գիտականություն, համակարգվածություն և հասանելիություն՝ թույլ տալով ընթերցողին լիարժեքորեն ըմբռնելու բովանդակության ներքին տրամաբանությունը:

Ամփոփումը որպես ռազմագիտական վերլուծության տրամաբանական հանգուցալուծում

Մենագրության եզրափակիչ հատվածում հեղինակը համակարգում է իր կատարած վերլուծության հիմնական արդյունքներն ու տեսական դիտարկումները՝ դրանց հիման վրա ձևակերպելով գործնական կիրառության արժանի հետևություններ: Արցախի զինված ուժերի տասնհինգամյա պատմության համակողմանի ուսումնասիրությունը հեղինակին հնարավորություն է տալիս վերականգնելու այն ռազմաքաղաքական իրականության պատկերը, որի պայմաններում ձևավորվել և զարգացել են պաշտպանական ինստիտուտները՝ խիստ սահմանափակ ռեսուրսների, չճանաչված պետության կարգավիճակի և արտաքին շարունակական սպառնալիքների առարկացման համատեքստում:

Հեղինակի դիտարկմամբ՝ Արցախում ռազմական շինարարության փորձը բացառիկ հիմք է ստեղծում ոչ միայն պատմական գիտելիքների խորացման, այլև զինված ուժերի զարգացման ռազմավարական ծրագրերի կառուցման համար: Ներկայացված գնահատականները,

հիմնված լինելով տեսական և գործնական վերլուծության միահյուսման վրա, կարևոր նշանակություն ունեն ազգային անվտանգության քաղաքականության վերանայման ու հստակեցման համար: Հատկապես արժեքավոր են առաջարկությունները, որոնք վերաբերում են ռազմական կառավարման համակարգերի արդիականացմանը, կադրային քաղաքականության ճկուն մոդելներին, սպառազինության վերազինման հնարավորություններին և տարածաշրջանային սպառնալիքներին համարժեք պատասխանների մշակմանը:

Աշխատության եզրահանգումները չեն սահմանափակվում նեղ պատմագիտական վերլուծությամբ: Դրանք ակնհայտորեն միտված են ապահովելու այնպիսի կիրառելի արդյունքներ, որոնք կարող են ինտեգրվել ռազմագիտական ուսուցման, քաղաքական ռազմավարության ձևավորման և պաշտպանության ոլորտում ընդունվող որոշումների տեսադաշտ: Դրանով իսկ մենագրությունը հաղթահարում է ակադեմիական սահմանները և վերածվում է պետական քաղաքականության համար կարևորագույն նշանակություն ունեցող՝ անվտանգային ոլորտի գործնական ուղեցույցի:

Գարրի Գ. Ասրյան – Գիտական հետաքրքրությունների շրջանակում են Զինված ուժերի կառուցման և զորքերի կառավարման տեսական ու գործնական հարցերը, բարձրագույն որակավորմամբ զինվորական կադրերի պատրաստման բարեփոխումները և այլն: Հեղինակ է 3 գիտական հետազոտությունների արդյունքների իրացման և 9 գիտական հոդվածների, համահեղինակ 6 գիտական հոդվածների և 5 ուսումնամեթոդական ձեռնարկների:

Արմեն Ռ. Բաղալյան – Գիտական հետաքրքրությունների շրջանակներն են Զանգեզուրում 1918–1921 թթ. ռազմաքաղաքական դրության, Խորհրդային Հայաստանի պատմության, ինչպես նաև ժամանակակից ռազմաքաղաքագիտական գործընթացների հիմնահարցերը: Հեղինակ է 40-ից ավելի գիտական հոդվածների և փաստաթղթերի հրապարակումների:

Գրականության ցանկ

1. **Գրիգորյան Լ.,** Մրցանակները հանձնվեցին, «Ազատ Արցախ», N147(1667), 25 դեկտեմբեր 2004 թ.:
2. **Հարությունյան Մ.,** Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, 170 էջ: https://haygirk.nla.am/upload/1941-/arcaxyan_paterazmi_skizby_2000.pdf (մուտք՝ 10.11.2024):
3. **Հարությունյան Մ.,** Արցախի ինքնապաշտպանական ուժերի կազմավորումը, ԱրՊՀ «Գիտական տեղեկագիր», № 1, Ստ., 2000, 78-88:
4. **Հարությունյան Մ.,** Ոգու և զենքի փառավոր հաղթանակը, «Հայկական բանակ», № 1-2, 2002, 73-86:
5. **Հարությունյան Մ.,** Շուշիի ազատագրման և ԼՂՀ զինված ուժերի կազմավորման հարցի շուրջ, Շուշին հայոց քաղաքակրթության օրրան: Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, 205-217:
6. **Հարությունյան Մ.,** ԼՂՀ պաշտպանության բանակի մի քանի առանձնահատկությունների մասին, Ստ., ԼՂՀ ՊՆ հրատ., 2010:
7. **Հարությունյան Մ.,** Արցախում ռազմական շինարարության համար Աղդամի ազատագրման նշանակության հարցի շուրջ, ՀՀ անկախության 20-ամյակին նվիրված «Ազգ, պետություն, հայրենիք. պետականության գաղափարը» երիտասարդ գիտնականների միջազգային գիտաժողովի (2011թ. նոյեմբեր 6-8, Ծաղկաձոր), հոդվածների ժողովածու, Եր., 2012, 103-109:
8. **Հարությունյան Մ.,** Արցախում ռազմական շինարարության պատմագրության մի քանի հիմնահարցերի մասին, «Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը» թեմայով միջազգային գիտաժողովի (2012 թ. հունիսի 24-հուլիսի 01, Երևան-Ստեփանակերտ) նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2012, 30-31 http://publishing.ysu.am/files/38.pdf (մուտք՝ 10.11.2024):
9. **Հարությունյան Մ.,** Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ., «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 5 (59-70), 2011, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2015: https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Kacar2006/2011(5)_ocr.pdf (մուտք՝ 11.11.2024):
10. **Հարությունյան Մ.,** Ռազմական շինարարությունը Արցախում 1991-2006 թթ., Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2017:
11. **Հարությունյան Մ.,** Արցախյան պատերազմի կարևոր օպերացիաների պատմա-գրական լուսաբանման որոշ վիճահարույց հարցերի մասին, «Հայկական բանակ» (ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի (ՊԱՀՀ) ռազմագիտական հանդես), 2019, № 4, 111-120:
12. **Հարությունյան Մ.,** Արցախի պաշտպանության հարավային թևում 1993 թ. ամառային ռազմարշավի մարտավարական առանձնահատկությունների մասին, «Լրաբեր հասարակական գիտությունների», մայիս-օգոստոս, 2020, №2 (659), 25-46 և այլն:
13. **Հարությունյան Մ.,** Արցախում ռազմարվեստի զարգացման արդի փուլի առանձնահատկությունները, Շուշի-Երևան, «Կաճառ» գիտական կենտրոնի

հրատ., 2021 (https://haygirk.nla.am/upload/1941-/arcaxum_razmarvesti_zargacman_ardi_puli_arandznahatkutyunner_2021.pdf (մուտք՝ 10.11.2024):

14. **Հարությունյան Մ.,** Ռազմական շինարարությունը Արցախում 1991-2006 թթ., Եր., «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2024:
15. Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994, Հայկական հանրագիտարանի հրատ. գիտախմբագր. հանձնաժողով՝ Հ. Մ. Այվազյան (գլխ. խմբագիր-տնօրեն), Ջ. Հ. Բալայան (նախագահ), Հ. Մ. Խաչատրյան (գլխ. խմբագրի և նախագահի տեղակալ, հատորի պատասխ.), Մ. Ա. Հարությունյան և ուրիշներ, Հանրագիտարան 1 հատորով, Եր., Հայկական Հանրագիտարանի հրատ., 2004:
16. **Մինասյան Է., Վարդանյան Ա.,** Պատմագիտական ուշագրավ աշխատություն (Հարությունյան Մ. Ա., Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ.:«Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 5(59-70), 2011, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2015, 294 +24 ներդիր), «Պատմություն և մշակույթ» (հայագիտական հանդես), 2017, 507-512: http://publications.ysu.am/wp-content/uploads/2017/09/ Graxosutyun. pdf (մուտք՝ 14.11.2024):
17. **Չիլինգարյան Դ., Երզնկյան Ե.,** Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարան, ՀՀ ՊՆ, ՊԱՀՀ, Եր., Ա. հ., 2015: https://razmavaraget.wordpress.com/wp-content/ uploads /2019/07/defense_security_explanatory_arm_rus_eng_unabridged_dictionary.pdf (մուտք՝ 16.11.2024):
18. «Военно-промышленный курьер» https://www.pressa-rf.ru/rucont/ edition/260828/ (մուտք՝ 14.11.2024):
19. «Внешнеэкономическое сотрудничество» - Статистический ежегодник ТС ВПК http://www.vpk-news.ru (ներկայում չի գործում):
20. **Захаров В.,** Военное строительство в государствах постсоветского пространства, Рос. ин-т стратегич. исслед., М., РИСИ, 2011:
21. Статистический комитет СНГ. Содружество Независимых Государств: Статистический ежегодник 1995-2006. Москва: Издательство Статкомитета СНГ, 1995-2007.
22. Jane's Information Group. Janes World Armies 1991-2006. Jane's Publishing, 1991-2007 https://www.janes.com (մուտք՝ 18.11.2024):
23. Jane's Information Group. Janes Defence Equipment and Technology 2002-2006. Jane's Publishing, 2002-200 https://www.janes.com (մուտք՝ 18.11.2024):
24. Stockholm International Peace Research Institute. SIPRI Yearbook: Armaments, Disarmament and International Security. Oxford University Press, 1991-2006: https://www.sipri.org (մուտք՝ 14.11.2024):
25. International Institute for Strategic Studies (IISS). The Military Balance 1991-2006. Routledge, 1991-2007 https://www.iiss.org (մուտք՝ 14.11.2024):
26. Mönch Publishing Group. *Military Technology*. Monthly journal, 1991-2006 https://monch.com (մուտք՝ 12.11.2024):

Bibliography (Latin Script)

1. **Grigoryan L.,** Mrcanaknery' hand'nvecin, «Azat Arcax», N147(1667), 25 dektember 2004 t'.:
2. **Harowt'yownyan M.,** Arcaxyan paterazmi skizby' & Showshii azatagrowmy', Er., HH GAA «Gitowt'yown» hrat., 2000, 170 e'j:
3. **Harowt'yownyan M.,** Arcaxi inqnapashtpanakan owjheri kazmavorowmy', ArPH «Gitakan teghekagir», № 1, St., 2000, e'j 78-88:
4. **Harowt'yownyan M.,** Ogow & zenqi p'ar'avor haght'anaky', «Haykakan banak», № 1-2, 2002, e'j 73-86:
5. **Harowt'yownyan M.,** Showshii azatagrman & LGhH zinvac' owjheri kazmavorman harci showrj, Showshin hayoc qaghaqakrt'owt'yan o'rran: Showshii azatagrman 15-rd taredard'in nvirvac' gitajhoghovi nyowt'er, Er., HH GAA «Gitowt'yown» hrat., 2007, e'j 205-217:
6. **Harowt'yownyan M.,** LGhH pashtpanowt'yan banaki mi qani ar'and'nahatkowt'yownneri masin, St., LGhH PN hrat., 2010:
7. **Harowt'yownyan M.,** Arcaxowm r'azmakan shinararowt'yan hamar Aghdami azatagrman nshanakowt'yan harci showrj, HH ankaxowt'yan 20-amyakin nvirvac' «Azg, petowt'yown, hayreniq. petakanowt'yan gaghap'ary'» eritasard gitnakanneri mijazgayin gitajhoghovi (2011t'. noyember 6-8, C'aghkad'or), hodvac'neri jhoghovac'ow, Er., 2012, e'j 103-109:
8. **Harowt'yownyan M.,** Arcaxowm r'azmakan shinararowt'yan patmagrowt'yan mi qani himnaharceri masin, «Haykakan ler'nashxarhi patmamshakowt'ayin jhar'angowt'yowny'» t'emayov mijazgayin gitajhoghovi (2012 t'. hownisi 24-howlisi 01, Er&an-Step'anakert) nyowt'eri jhoghovac'ow, Er., EPH hrat., 2012, e'j 30-31
9. **Harowt'yownyan M.,** Arcaxyan paterazmy' & pashtpanowt'yan banaki martakan owghin. 1991-1994 t't'., «Katwar'» (KGK-i taregirq): Girq 5 (59-70), 2011, Showshi, «Katwar'» gitakan kentroni hratarakchowt'yown, 2015:
10. **Harowt'yownyan M.,** R'azmakan shinararowt'yowny' Arcaxowm 1991-2006 t't'., Showshi, «Katwar'» gitakan kentroni hrat., 2017:
11. **Harowt'yownyan M.,** Arcaxyan paterazmi kar&or o'peracianeri patma-grakan lowsabanman orosh vitwaharowyc harceri masin, «Haykakan banak» (HH PN Pashtpanakan azgayin hetazotakan hamalsarani (PAHH) r'azmagitakan handes), 2019, № 4, e'j 111-120:
12. **Harowt'yownyan M.,** Arcaxi pashtpanowt'yan haravayin t'&owm 1993 t'. amar'ayin r'azmarshavi martavarakan ar'and'nahatkowt'yownneri masin, «Lraber hasarakakan gitowt'yownneri», mayis-o'gostos, 2020, №2 (659), e'j 25-46 & ayln:
13. **Harowt'yownyan M.,** Arcaxowm r'azmarvesti zargacman ardi p'owli ar'and'nahatkowt'yownnery', Showshi-Er&an, «Katwar'» gitakan kentroni hrat., 2021:
14. **Harowt'yownyan M.,** R'azmakan shinararowt'yowny' Arcaxowm 1991-2006 t't'., Er&an, «Katwar'» gitakan kentroni hrat., 2024:
15. Gharabaghyan azatagrakan paterazm. 1988-1994, Haykakan hanragitarani hrat. gitaxmbagr. hand'najhoghov` H. M. Ayvazyan (glx. xmbagir-tno'ren), Z. H. Balayan (naxagah), H. M. Xachatryan (glx. xmbagri & naxagahi teghakal, hatori patasx.), M. A. Harowt'yownyan & owrishner, Hanragitaran 1 hatorov, Er., Haykakan Hanragitarani hrat., 2004:
16. **Minasyan E'.,** Vardanyan A., Patmagitakan owshagrav ashxatowt'yown (Harowt'yownyan M. A., Arcaxyan paterazmy' & pashtpanowt'yan banaki martakan owghin. 1991-1994 t't'.:«Katwar'» (KGK-i taregirq): Girq 5(59-70), 2011, Showshi, «Katwar'» gitakan kentroni hrat., 2015, 294 +24 e'j nerdir), «Patmowt'yown & mshakowyt'» (hayagitakan handes), 2017:
17. **Chilingaryan D.,** Erznkyan E., Pashtpanakan-anvtangayin terminneri bacatrakan hayeren-r'owseren-angleren, r'owseren-hayeren, angleren-hayeren mec' bar'aran, HH PN, PAHH, Er&an, A. h., 2015:
18. «Voenno-promyshlennyj kur'er».

19. «Vneshnejekonomicheskoe sotrudnichestvo» - Statisticheskij ezhegodnik TS VPK.
20. Statisticheskij komitet SNG. Sodruzhestvo Nezavisimyh Gosudarstv: Statisticheskij ezhegodnik 1995-2006. Moskva: Izdatel'stvo Statkomiteta SNG, 1995-2007.
21. **Zaharov V.,** Voennoe stroitel'stvo v gosudarstvah postsovetskogo prostranstva, Ros. in-t strategich. issled., M., RISI, 2011: